ՎԵՐՆԱԳԻՐ՝ ՉԱՐԵՆՑԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ԱՌԱՐԿԱՆ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱՐԱՆ՝ VII ա

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 6 շաբաթ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐ՝

1.Ավանեսյան Ավետ Սեյրանի

2.Անդրեասյան Էլեն Վահեի

3.Ավագյան Գոռ Վահեի

4.Ավագյան Մանե Մարտիկի

5.Գալստյան Աննա Գարիկի

6.Թադևոսյան Ալեքս Կարենի

7.Իսախանյան Միլենա Սևակի

8.Խաչատրյան Ավետ Տարոնի

9. Խաչատրյան Մարիանա Գագիկի

10.Հակոբյան Էլեն Սարգիսի

11.Մանուկյան Մանուկ Հայկարամի

12. Մարգարյան Անի Գեղամի

13. Մկրտչյան Անգելինա Մակիչի

14. Նավասարդյան Նարե Հաբեթի

ՆՊԱՏԱԿԸ՝

1.Աշակերտները խորությամբ կծանոթանան գրողի կյանքի կարևոր փաստերին, ստեղծագործություններին:

2.Աշակերտները կվերլուծեն և կներկայացնեն իրենց տեսակետները, ընկալումները ժամանակաշրջանի և դեպքերի վերաբերյալ:

3.Աշակերտները կզարգացնեն հետազոտական և ստեղծագործական հմտությունները:

4.Կարտասանեն Չարենցի ստեղծագործություններից:

ՆՅՈՒԹԵՐ՝

1. Դասագրքեր, երկերի ժողովածուներ,հոդվածներ:

2.Հեղինակի ընտանեկան լուսանկարներ, տեսանյութեր,ֆիլմեր:

3.Հեղինակի ծննդավայրի վերաբերյալ փաստեր, լուսանկարներ:

4. Չարենցին նվիրված հուշակոթողներ:

5.Ստվարաթուղթ, սոսինձ, մատիտներ, մկրատ, ներկեր:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝ Ստանալ եղիշե Չարենցի կյանքի և գործունեության վերաբերյալ տեսաֆիլմ, հեղինակի լուսանկարներով և խոսքերով ձևավորած էջանշաններ, աշակերտների մտահղացումներով «Ծիածան» և «Տաղարան» գրքրի ստեղծում և նկարազարդում:

Կազմել խաչբառներ և ռեբուսներ:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ՝

Շաբաթ 1:

1.Հեղինակի կյանքի և գործունեության ուսումնասիրություն:

Սովորողները կծանոթանան հեղինակի կյանքին և ստեղծագործություններին: Կդիտեն տեսանյութեր և դրվագներ: Ուսուցիչը հակիրճ կներկայացնի պատմական ժամանակաշրջանը և կբացատրի եղիշե Չարենցի թողած գրական ժառանգության կարևորությունը հայ գրականության մեջ:

Շաբաթ 2:

2. Կազմակերպչական հարցեր.

Ստեղծել աշխատանքային խմբեր: Կատարել աշխատանքի բաժանում:Ուսուցիչը տալիս է խմբերին հստակ առաջադրանքներ և սահմանում վերջնաժամկետ :

Շաբաթ 3:

3. Կատարված աշխատանքների ամփոփում, սխալների ուղղում ուսուցչի կողմից և նոր հանձնարարությունների տրամադրում:

Աշակերտները ծանոթանում են «Ծիածան» և «Տաղարան» ժողովածուներին:

Կունկնդրեն որոշ բանաստեղծությունների հիման վրա ստեղծված երգեր:

Կգտնեն տեղեկություններ հեղինակին նվիրված հուշակոթողների ստեղծման մասին:

Կուսումնասիրեն և առանձնացնեն հայտնի մտածողների խոսքերը Եղ. Չարենցի մասին:

Շաբաթ 4:

4. Այցելություն Եղ. Չարենցի տուն-թանգարան, հանդիպում մասնագետների, չարենցագետների հետ:

1.Սովորողները կայցելեն Չարենցի տուն-թանգարան,կլսեն լրացուցիչ տեղեկություններ հեղինակի մասին:Կլուսանկարեն որոշ դրվագներ:

2.Այնուհետև կվերանայեն նախորդ օրերին արծարծված թեմաները և կպատրաստվեն

վերջնարդյունքի ստեղծմանը:

Շաբաթ 5:

Ստեղծել Չարենցի կյանքի և գործունեությանը վերաբերող տեսաֆիլմ ,օգտագործել ՏՀՏ գործիքներ տեսանյութը պատրաստելու համար:

Պատրաստել էջանշանները, «Ծիածան» և «Տաղարան» գրքերը:Կատարել ձևավորում:

Շաբաթ 6:

8.Նախագծի ներկայացում.

Աշակերտները իրենց դասընկերներին և ուսուցիչներին կներկայացնեն նախագիծը և կգնահատվեն: